Թեմատիկ պլանավորում

«Հասարակագիտություն »

Դասարան՝ 10

Շաբաթական 2 ժամ

Տարեկան 68 ժամ

Դասագրքի հեղինակներ՝ Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Հ.Խաչատրյան, Կ. Վարդանյան, Հ.Աղաջանյան (Տիգրան Մեծ հրատարակչություն, 2014)

Թեմատիկ պլանը կազմող ուսուցիչներ՝

Լյուդմիլա Գրիգորյան (Սիսիանի ավագ դպրոց),

Անահիտ Մաղաթյան (Կոտայքի մարզի Ջրաբերի միջնակարգ դպրոց),

Կարինե Ավետիսյան (Արարատի մարզի Վանաշենի միջնակարգ դպրոց),

Արև Հովհաննիսյան (Արագածոտնի մարզի Լուսագյուղի միջնակարգ դպրոց),

Սիլվա Հասանյան (Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոց)

Սահակյան Սվետլանա (Կոտայքի մարզի Չարենցավանի թիվ 2 հիմնական դպրոց)

Հայկանուշ Ղևոնդյան (Երևանի Ալ. Բլոկի անվան թիվ 122 հիմնական դպրոց)

Պատասխանատու՝ ԿԶՆԱԿ – ի ուսումնական բնագավառների մշակման և զարգացման բաժնի մասնագետ Կարինե Հարությունյան

Բաժին 1. Գեղագիտություն/17 ժամ/	Թեմայի նպատակը	Վերջնարդյունքներ
Թեմա 1. Ինչ է գեղեցիկը /3 ժամ/	Ներկայացնել գեղեցիկի տարբեր սահմանումներ: Բնութագրել շրջապատող իրերի գեղեցկությունը, նկարագրել գեղեցիկի ընկալումները տարբեր մշակութային միջավայրերում:	Բերել օրինակներ բնությունից և մարդկային ստեղծագործություններից: Օրինակներով ցույց տալ գեղեցկության պահպանման և սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը, մենկաբանել

		պատասխանատվության իր բաժինը գեղեցիկի պահպանման գործում:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 1-2. Գեղեցիկի հասկացությունը Դաս 3.Գեղեցիկը տարբեր մշակութային միջավայրերում	2 1
Թեմա 2. Կենցաղի և առօրեականության գեղագիտական բնութագիրը / 5 ժամ/	Թվարկել և ցուցադրել կենցաղի և առօրեականության գեղագիտական որոշ բնութագրեր: Բացատրել մարդու ապրելակերպի և գեղեցիկի կապը: բացատրել «մոդա» և «ազգային հագուստ» հասկացությունները:	Համեմատել մոդայիկն ու մնայունը գեղեցիկի մեջ:Ներկայացնել մաքրության գեղագիտական նշանակությունը, հոգու և մարմինի ներդաշնակության գեղագիտական կողմը:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 4. Գեղեցիկը մեր ամենօրյա կյանքում Դաս 5-6.Մեզ շրջապատող միջավայրի գեղագիտական կողմը Դաս 7.Մոդայի գեղագիտական տարրը:Ազգային հագուստ Դաս 8. Գեղեցիկ վարվելակերպ և հաղորդակցություն	1 2 1 1

Թեմա 3. Գեղեցիկը արվեստում /3 ժամ/	Սահմանել արվեստը, նկարագրել արվեստի առաջացման մասին ուսմունքները, բացատրել արվեստի և մարդու ազատ ինքնաարտահայտման կապը:	Օրինակներով ներկայացնել արվեստի ազդեցությունը մարդու կյանքում, արվեստի տարբեր տեսակներն ըստ մարդու և հասարակության վրա ունեցած ազդեցության:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 9. Արվեստը որպես մարդու ինքնաարտահայտման ազատություն Դաս 10-11. Գեղեցիկը արվեստի տարբեր բնագավառներում	1 2
Թեմա 4. Գեղագիտական իդեալ և ճաշակ / 5 ժամ/	Բնութագրել գեղագիտական իդեալը, բացատրել «գեղագիտական ճաշակ» հասկացությունը, վերարտադրել գեղեցիկի հայկական իդեալի որոշ տարրեր:	Ներկայացնել գեղագիտական իդեալի հարաբերական բնույթը, ճաշակի դերը իրականության գեղագիտական ընկալման մեջ, կապակցել դասական և մոդեռն գեղագիտական իդեալները, վերլուծել գեղագիտական իդեալի փոխակերպումները մարդկության պատմության ընթացքում:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 12. Ինչ է գեղագիտական իդեալը Դաս 13-14. Գեղագիտական իդեալի փոխակերպումները մարդկության պատմության ընթացքում	1 2

	Դաս 15-16. Գեղեցիկի արտահայտումը ժամանակակից արվեստում	2
Բաժին 2.Բարոյագիտություն /17 ժամ/	Թեմայի նպատակը	
Թեմա 1. Բարոյագիտության առարկան: Հիմնական տեսությունները /3 ժամ/	Տարբերել «բարոյական», «ոչ բարոյական» և «անբարոյական» հասկացությունները, բացատրել բարոյական էգոիզմի առանձնահատկությունները, բարոյական պարտքի էությունը:	Վերջնարդյունքներ Օրինակներով ներկայացնել բարոյական էգոիզմի դրական և բացասական կողմերը, մենկաբանել Իմանուիլ Կանտի բարոյագիտական ուսմունքի հիմնադրույթները, համեմատել իրավական և բարոյական նորմերը:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 1-2.Ի՞նչ է բարոյականը: Բարոյագիտության առարկան Դաս 3. Բարոյագիտության հիմնական տեսությունները	2 1
Թեմա 2. Բարոյական արժեքներ / 4 ժամ/	Ձևակերպել բարու և չարի հասկացությունները, թվարկել հայկական բարոյական նորմեր և ավանդույթներ, համամարդկային բարոյական արժեքներ:	Համեմատել բարու և չարի մասին հիմնական մոտեցումները:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 4.Բարի ու չարը Դաս 5. Պարտք և խիղճ Դաս 6. Երջանկություն Դաս 7. Էգոիզմ և ալտրուիզմ	1 1 1 1

Թեմա 3. Բարոյական . կշռադատումներ և որոշումների կայացում /3 ժամ/	Թվարկել բարոյական զարգացման աստիճանները, բարոյական երկընտրանքների վերլուծության քայլերը, բախումնային իրավիճակներում ընտրել որոշումներ կայացնելու արդյունավետ մեթոդներ:	Օրինակներով ներկայացնել բարոյական զարգացման աստիճաններին համապատասխանող կշռադատումները, բնութագրել բարոյական երկընտրանքների լուծման տարբերակների ուժեղ և թույլ կողմերը, որոշումների կայացման մեթոդների առավելություններն ու թերությունները:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 8-9. Բարոյական կշռադատումներ Դաս 10. Բարոյական երկընտրանքներ	2 1
Թեմա 4. Ազատություն և պատասխանատվություն / 4 ժամ/	Մեկնաբանել պատժի և խրախուսման անհրաժեշտությունը, ընտրության ազատության և բարոյական պատասխանատվության փոխկախվածությունը:	Կոնկրետ օրինակների հիման վրա կապակցել պատժի և խրախուսման ձևերն արդարության հետ, տարբերել ազատությունը և •կամքի ազատությունը:
	Դաս	ժամաքանակ
	Դաս 11. Ազատություն և բարոյականություն Դաս 12. Խրախուսում և պատիժ Դաս 13-14. Բարոյական կատարելագործում և առաքինություններ	1 1 2

Թեմա 5. Բարոյագիտության ժամանակակից հիմնահարցեր /2 ժամ/	Թվարկել կրոնի և բարոյականության փոխհարաբերության ձևերը, համաշխարհային կրոնների բարոյական հիմնադրույթները:	Նկարագրել Գրիգոր Նարեկացու ուսմունքը բարոյական կատարելագործման մասին, օրինակներով ցույց տալ կրոնի և բարոյականության ընդհանրությունները:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 15. Գործարար էթիկա Դաս 16. Կենդանիների իրավունքների հիմնահարցը	1 1
Բաժին 3. Հոգեբանություն /17 ժամ/	Թեմայի նպատակը	Վերջնարդյունքները
Թեմա 1. Հոգեբանության ընդհանուր հարցեր /2 ժամ/	Նկարագրել հոգեբանության զարգացման փուլերը, թվարկել հոգեբանության խնդիրները, բնագավառները:	Տարբերակել հոգեբանությունը որպես գիտություն, կենցաղային «առօրյա» հոգեբանությունից, բնութագրել հոգեբանության դերը ժամանակակից կյանքում:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 1.Հոգեբանությունը որպես գիտություն: Ուսումնասիրության առարկան և խնդիրները Դաս 2. Հոգեբանության հետազոտության մեթոդները: Հոգեբանության բնագավառները և միջառարկայական կապերը	1 1

Թեմա 2. Հոգեկանի կառուցվածքն ու գործառույթները /2 ժամ/	Սահմանել «հոգեկան» հասկացությունը, թվարկել հոգեկան երևույթները, բացատրել հոգեկանի հիմնական ֆունկցիաները, նկարագրել հոգեկան ակտիվության մակարդակները:	Բնութագրել հոգեկան դրսևորումների և ուղեղի ու նրա համապատասխան բաժինների աշխատանքի միջը կապը, համեմատել հոգեկան ակտիվության մակարդակները:
	Դաս	Վերջնարդյունքներ
	Դաս 3. Հոգեկանը որպես արտացոլում Դաս 4. Բարձրագույն նյարդային գործունեություն: Հոգեկանի ակտիվության մակարդակները	1 1
Թեմա 3. Հոգեկանի զարգացման շարժիչ ուժերը /1 ժամ/	Բացատրել հոգեկանի զարգացման կենսաբանական և սոցիալական գործոնները:	Նկարագրել հոգեկանի զարգացման շարժիչ ուժերի վերաբերյալ հակադիր մոտեցումները:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 5.Որ ուժերն են նպաստում հոգեկանի զարգացմանը	1
Թեմա 4. Անձնավորություն / 2 ժամ/	Սահմանել «անհատ», «անձ» և «անհատականություն» հասկացությունները, թվարկել զարգացման տարիքային շրջանները և նկարագրել վաղ պատանեկությունը, անձի սոցիալական վարքի շեղումները, ինքնակառավարումը և	Համեմատել «անհատ», «անձ» և «անհատականություն» հասկացությունները, նկարագրել սոցիալական իր դերերը՝ որոշակի պարտականությունների և իրավունքների տեսանկյունից,խմբերը, որում

	պաշտպանական մեխանիզմները:	ընդգրկված է, ներկայացնի սեփական վարքի ինքնակառավարման իր տարբերակները:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 6. Անձնավորության հոգեբանական բնութագիրը Դաս 7. Անձնավորության սոցիալականացումը	1 1
Թեմա 5.Հոգեկան գործընթացներ: Խոսքային հաղորդակցում /4 ժամ/	Սահմանել զգայությունը, ընկալումը և հիշողությունը, բացատրել հիշողության հիմնական գործընթացները, լեզվի ֆունկցիաները, խոսքի տեսակները, երևակայության տեսակները, կամային որակները:	Ներկայացնել ուշադրության հիմնական առանձնահատկությունները, համեմատել զգայությունը և ընկալումը, բնութագրել սեփական հիշողությունը, օրինակներով բացատրել մտածողության տեսակները, մտածողության և խոսքի կապը, համեմատել լեզուն և խոսքը, իմացական գործընթացները, նկարագրել կամքի դերը մարդու կյանքում:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 8. Զգայություն և ընկալում Դաս 9. Ուշադրություն: Հիշողություն Դաս 10. Մտածողություն և խոսք Դաս 11. Երևակայություն: Կամք	1 1 1 1

Թեմա 6. Հույզեր և զգացմունքներ /1 ժամ/	Սահմանել «հույզ», «զգացմունք» և «հուզական վիճակ» հասկացությունները, դասակարգել հույզերը, հուզական վիճակները:	Նկարագրել հույզերի ու զգացմունքների հիմնական գործառույթները, արտակարգ իրավիճակներում դրսևորվող հոգեկան վիճակները, սեփական հուզազգացմունքային ոլորտը:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 12.Հույզերն ու զգացմունքները մարդու կյանքում	1
Թեմա 7. Անձի անհատական առանձնահատկությունները: /2 ժամ/	Բացատրել «խառնվածք», «բնավորություն» և «ընդունակություններ» հասկացությունները,թվարկել խառնվածքի տիպերը:	Նկարագրել խառնվածքի ու նյարդային համակարգի տիպերը, սեփական անհատական առանձնահատկությունները, տարանջատել «ընդունակություն» և «ընդունակությունների նախադրյալներ» հասկացությունները, մեկնաբանել հոգեկան որակների դերը մարդու կենսագործունեության մեջ:
	Դաս 13. Խառնվածք Դաս 14.Բնավորություն: Ընդունակություններ	1 1
Թեմա 8. Ընտանիքի հոգեբանություն /1 ժամ/	Սահմանել ընտանիքը որպես յուրահատուկ սոցիալական խումբ, բացատրել ընտանիքի գործառույթները:	Թվարկել ժամանակակից ընտանիքների տեսակները, դասակարգել ըստ կառուցվածքի և

		գործառույթների, նկարագրել ընտանիքի զարգացման դինամիկան, ճգնաժամային փուլերը:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 15. Ընտանիքի տեսակներն ու գործառույթները	1
Թեմա 9. Կոնֆլիկտները մարդու կյանքում /1 ժամ/	Սահմանել «կոնֆլիկտ» հասկացությունը, բացատրել կոնֆլիկտների առաջացման պատճառները:	Օրինակներով ներկայացնել կոնֆլիկտների հետևանքները այլ մարդկանց և հասարակության կյանքում, նկարագրել կոնֆլիկտների առաջացման հոգեբանական պատճառները և լուծման հոգեբանական ավանդույթները:
	Դաս 16. Մարդկային փոխհարաբերությունների հոգեբանություն	1
Բաժին 4. Տնտեսագիտություն / 17 ժամ/		
Թեմա 1. Տնտեսագիտություն առարկան և խնդիրները	Սահմանել տնտեսագիության առարկան և թվարկել խնդիրները, նկարագրել սակավության հիմնախնդիրը, բնութագրել արտադրության գործոնները, ձևակերպել տնտեսագիտության երեք հիմնական հարցերը;	Օրինակների միջոցով բացատրել այլընտրանքի արժեքը, սահմանային ծախքի և օգուտի ազդեցությունը մարդկանց ամենօրյա որոշումների վրա, մեկնաբանել, թե ինչպես է շահույթի հեռանկարը դրդում

		արտադրել այն, ինչ անհրաժեշտ է սպառողին:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 1.Տնտեսագիտության ելակետային հասկացությունները Դաս 2. Տնտեսագիտության երեք հիմնական հարցերը: Սեփականությունը և դրա տեսակները:	1 1
Թեմա 2. Արտադրություն: Արտադրության գործոնները: Վերարտադրություն: Տնտեսական աճ /2 ժամ/		
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 3. Արտադրության Էությունը և գործոնները Դաս 4. Վերարտադրության փուլերը: Տնտեսական աճ:	1 1
Թեմա 3. Շուկայական տնտեսություն: Արժեք և փող /2 ժամ/	Սահմանել «առաջարկ» և «պահանջարկ» հասկացությունները, բացատրել պահանջարկի և առաջարկի գնային առաձգականությունը:	Թվարկել պահանջարկի և առաջարկի վրա ազդող գործոնները, վերլուծել տարբեր գործոնների ազդեցությունը պահանջարկի և առաջարկի վրա:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 5.Շուկայական տնտեսության ձևավորումը: Բարիքի արժեքը Դաս 6. Փողը և դրա գործառույթները	1 1

Թեմա 4 . Պահանջարկ և առաջարկ	Նկարագրել նվազող սահմանային արժեքայնությունը և օգտակարությունը:	Բերել փոխարինող և փոխլրացնող ապրանքների օրինակներ:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 7. Պահանջարկ Դաս 8.Առաջարկ	1 1
Թեմա 5. Արտադրության գործոնները և գործոնային եկամուտները 2 ժամ/	Բացատրել, թե որոնք են արտադրության գործոնները, բնութագրել ազատ ձեռնարկատիրության սյուները:	Ներկայացնել շահույթի դերը ազատ ձեռնարկատիրական համակարգում, տարբերել աշխատավարձի վրա ազդող շուկայական և ոչ շուկայական գործոնները:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 9.Աշխատանք և աշխատավարձ: Կապիտալ և տոկոս: Հող և ռենտա: Ձեռնարկատիրություն և շահույթ Դաս 10.Ձեռնարկատիրական գործունեություն և շահույթ	1 1
Թեմա 6. Բանկային համակարգ /2 ժամ/	Նկարագրել բանկերի էությունը: //////	Թվարկել ՀՀ Կենտրոնական բանկի գործառույթները:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս 11.Բանկերը և դրանց գործառնությունները Դաս 12.Վարկային հարաբերություններ	1 1
	Թեմայի նպատակը	Վերջնարդյունքներ

Թեմա 7. Պետության տնտեսական դերակատարումը /3 ժամ/	Նկարագրել մուրհակ, բանկ, բանկի եկամուտ, վարկ և վարկի տոկոսադրույք հասկացությունները: Սահմանել պետական բյուջե, հարկ և տուրք հասկացությունները:	Տարբերել պետական բյուջեի եկամուտների աղբյուրները, հարկման եղանակներն ու տեսակները , ծախսերի ուղղությունները: Բնութագրել փողի հատկանիշները և գործառույթները: Տարբերել վարկի գործառույթները, ձևերն ու տեսակները, անվանական և փաստացի տոկոսադրույքները: Թվարկել բնակչության եկամուտի հիմնական աղբյուրները և անհավասարության պատճառները, առանձնացնել պետության կողմից իրականացվող սոցիալական ապահովության միջոցառումների հիմնական ուղղությունները:
	Դաս	Ժամաքանակ
	Դաս13. Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը Դաս 14. Բնակչության եկամուտները և դրանց անհավասարությունը Դաս 15. Գործնական աշխատանք (Պետական բյուջեի եկամուտների և շախսերի ուսումնասիրությունը)	1 1 1
Թեմա 8. Միջազգային տնտեսական հարաբերություններ/ 2 ժամ/		
	Դաս	Ժամաքանակ
	Դաս16. Արտաքին առևտուրը, Կապիտալի արտահանումը,	1

	աշխատանքի միջազգային միգրացիան և արժույթը Դաս 17. Գործնական աշխատանք(Գործազրկությունը և աշխատանքի միգրացիան)	1
10-րդ դասարան		
Թեմա 6. Բանկային համակարգ Թեմա 7. Պետության տնտեսական դերակատարումը Թեմա 8. Միջազգային տնտեսական հարաբերություններ	Դաս 12. Վարկային հարաբերություններ Դաս 13. Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը Դաս 14. Բնակչության եկամուտները և դրանց անհավասարությունը Դաս 15. Արտաքին առևտուրը, կապիտալի արտահանումը, աշխատանքի միջազգային միգրացիան և արժույթը	2 2 2 2 2

01.09.2022թ.

Կրթ. գծով տ.

Դաս. աշխ. գծով փոխտնօր.

Գ. Վարդանյան